

# ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ 1900-1930ԱԿԱՆՆԵՐԻՆ

ՅԱՍՄԻԿ ԵՍԱՅԵԱՆ  
hasmiktk@yahoo.com

## ՄՈՒՏՔ

Կալիֆորնիայում հաստատուած հայերի ազգային կեանքի կազմակերպման գործում բացառիկ դեր ունի հայ պարբերական մամուլը: Այն մեծապէս նպաստել է տեղի հայութեան միջեւ հաղորդակցմանը, ամրապնդել կապը աշխարհի միւս վայրերում հիմնադրուած հայ համայնքների ու Հայաստանի հետ, տասնամեակներ շարունակ պահպանել ու փոխանցել է լեզուական եւ պատմամշակութային արժէքներ: Այն իրապէս արտացոլել է այն ինչ Ֆրեզնոյի *Մշակ* թերթի յօդուածագիր Ե. Խ. Ռշտունին գրել էր. «*Մամուլը ժողովուրդին միտքն ու սիրտն է*»<sup>1</sup>:

Կալիֆորնիայի հայ պարբերական մամուլի պատմութիւնը առ այսօր առանձին հետազոտութեան առարկայ չի դարձել, թէւ նիւթին այս կամ այն չափով անդրադարձել են տարբեր հեղինակներ, որոնք զբաղուել են ամերիկահայութեան կամ Կալիֆորնիայի հայութեան պատմութեան ուսումնասիրութեամբ, ինչպէս նաեւ, առհասարակ, հայ տպագիր մամուլի մատենագիտական քննութեամբ<sup>2</sup>:

Մեր խնդիրն է ներկայացնել Կալիֆորնիայում հայ պարբերական մամուլի հիմնադրման ու գործունէութեան առաջին երեք տասնամեակը:

\*\*\*

Արեւելեան ԱՄՆում սեփական մամուլ հիմնելու անհրաժեշտութիւնն ու հնարաւորութիւնը առաջացան հայերի գաղթից (1830ականներ) հինգ տասնամեակ անց: Մինչդեռ Կալիֆորնիայում հայկական առաջին թերթերը հրատարակուեցին այդտեղ հայերի հաստատուելուց (1880ականներ) մօտ երկու տասնամեակ անց:

Դա ուներ իր հիմնաւոր պատճառները: 1830-40ականներին Արեւմտեան Հայաստանից գաղթելով ԱՄՆի արեւելք (սկզբնական շրջանում բոլոր ներգաղթողները երկիր մուտք էին գործում Նիւ Եորքի նաւահանգստից)՝ հայերը նպատակ են ունեցել ուսանելու կամ առաւել յաճախ՝ գումար վաստակելու՝ առանց մշտական բնակութիւն հաստատելու մտադրութեան: Նրանք երկար ժամանակ եղել են նիւթապէս անկայուն վիճակում, իսկ թերթի հրատարակութիւնը կապուած էր նիւթական դժուարութիւնների հետ: «*Մեր գաղթականութիւնը*, - գրում է Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան անդամ, մտաւորական Արսէն-Տիրանը, - *որ Ատլանտեանի այս կողմը նոր սկսեր է հաստատուիլ, իր ապրուստը ապահովելու ճգնումին մէջ, դեռ*

*ժամանակը եւ առիթը չէ գտեր պահանջուած մտաւոր եւ նիւթական ուժերը յատկացնելու իր Մամուլին»<sup>3</sup>:*

Պարբերական մամուլի հիմնադրման գործում կարեւոր էր նաեւ համապատասխան մասնագէտների առկայութիւնը: Սկզբնական շրջանում արեւելեան նահանգներ գաղթում էին հայ արհեստավորներ, առեւտրականներ, գիւղացիներ (թէւեւ առաջին գաղթականները ուսանողներ էին, սակայն նրանց թիւը հինգ տասնամեակի ընթացքում՝ 1830-1880ականներ, հասնում էր մօտ 70ի<sup>4</sup>): 1890ականներին, երբ Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականութեան հետեւանքով Արեւմտեան Հայաստանի տարբեր շրջաններից հայեր սկսեցին գաղթել ԱՄՆի արեւելեան ափեր, այստեղ հաստատուած հայութեան ընկերային կազմը սկսեց աստիճանաբար փոխուել: Գաղթականների շարքերը համալրուեցին նաեւ գործարարներով, յեղափոխական-կուսակցական գործիչներով, մտաւորականներով. ստեղծուած հանգամանքները ստիպեցին հայութեանը՝ մտածել ԱՄՆի արեւելեան ափերին հիմնուելու մասին:

Իրավիճակը այլ էր արեւմտեան ափում: Սկսած 1900ականներից՝ Կալիֆորնիա գաղթող հայերի մի մասը ուներ նիւթական որոշակի կարողութիւն: Մրանք հիմնականում այն հայերն էին, որոնք կ'ամ Արեւմտեան Հայաստանում վաճառել էին իրենց ունեցուածքը եւ ընտանիքներով գաղթել Կալիֆորնիա, կ'ամ էլ, տասնամեակներ շարունակ ԱՄՆի արեւելեան նահանգների արդիւնաբերական գործարաններում դժուար աշխատանքից յուսահատ, տեղափոխուել էին արեւմուտք: Ապահով կեանքի հեռանկար խոստացող Կալիֆորնիայում հայերը հանգրուանում էին հիմնականում ընտանիքներով՝ Կալիֆորնիան իրենց համար նկատելով բնակութեան հիմնական վայր, իսկ Ֆրեզնօն՝ «վերածնուած հայրենիք», որը յետագայում պիտի կոչուէր Փոքր Հայաստան (Little Armenia<sup>5</sup>). ազգային կազմակերպուած կեանք ստեղծելու պահանջն այստեղ առաւել զգալի էր:

*Ասպարէզ* թերթի առաջին համարի խմբագրականում կարդում ենք. «Ոչ այնչափ պանդխտութեան ցուպը ձեռք առնելով քաղաքէ քաղաք եւ երկրէ երկիր թափառող ու բախտ որոնող հայ երիտասարդն է Ֆրեզնօ եկողը. ոչ այնչափ առեւտրական շահադիտութենէ մղուած հայ վաճառականն է եկողը. ոչ այնչափ ուսման ծարարը յագեցնելու տենչացող հայ ուսանողն է եկողը, այլ գլխաւորաբար հայրենի հողէն հայաձական դուրս նետուած հայ ընտանիքն է որ Ֆրեզնոյի եւ շրջականերուն հայ գաղութը կը կազմէ... Հայը հոս եկած է մնալու դիտաւորութեամբ»<sup>6</sup>:

Ինչպէս նշուեց, Կալիֆորնիա գաղթող հայերի մի մասը գալիս էր ԱՄՆի արեւելեան նահանգներից: Նրանք արդէն որոշ չափով իւրացրել

Էին տեղի լեզուն, ծանօթ էին ամերիկեան իրականութեանը, յարմարուել էին միջավայրին: Նրանց թուով կային նաև գրագետ մարդիկ, որոնցից առանձնանում էր երիտասարդ լրագրող **Հայկակ Էկինեանը**՝ հայ տպագիր մամուլի հիմնադիրը Ատլանտեան եւ Խաղաղ ովկիանոսների փերին:

#### ՀԱՅԿԱԿ ԷԿԻՆԵԱՆ

1883ին Էկինեանը Արեւմտեան Հայաստանից գաղթել էր ԱՄՆ՝ Նիւ Ջըրսի, ուսումը շարունակելու. թղթակցել է Կ.Պոլսի հայկական թերթերին: Նա 1888ին Վենետիկի Միսիթարեան Միաբանութիւնից Ջըրսի Միթի էր բերել տպագրական մեքենայի հայերէն տառեր եւ հրատարակել էր ԱՄՆում առաջին հայկական թերթը՝ *Արեգակ*: Տասնմէկ տարի խմբագրական եւ հրատարակչական գործունէութիւն ծաւալելուց յետոյ՝ 1899ին, Էկինեանը անցնում է Ֆրեզնօ: Նրա նախաձեռնութեամբ 1902ին լոյս է տեսնում Կալիֆորնիայի առաջին հայկական թերթը՝ *Քաղաքացի*<sup>7</sup>: Մօտ երկու տասնամեակ՝ նաև կեանքի վերջին տարիներին, ապրում եւ ստեղծագործում է Ֆրեզնոյում: Նա էր իր հրատարակած բոլոր թերթերի խմբագիրը, սրբագրիչը, թարգմանիչը, հաշուապահը եւ առաքիչը<sup>8</sup>: Էկինեանը հանգչում է Ֆրեզնոյի Արարատ գերեզմանատանը, ուր այցելելու առիթը ունեցանք 2013ին: Նրա գերեզմանաքարին փորագրուած են հետեւեալ տողերը իր կտակից. *«Օր մը գուցէ Հայաստանէն սոխակն հայու հոտ առած՝ թոչի՝ անցնի մեծ ովկիան, գտնէ տապանն իմ սառած. տաք արտասուօք թանայ գերեսն իմ ցամքեալ տապանին, գուցէ յայնժամ իմ ոսկորներ հողի ներքեւ կը հանգչին»*:

Վեց տարի շարունակ Էկինեանի *Քաղաքացի*ն եղաւ Ֆրեզնոյի միակ հայկական հրատարակութիւնը: 1908ին մի խումբ դաշնակցական գործիչներ՝ Ա. Կ. Սեբլեմեանի գլխաւորութեամբ հրատարակում են *Ասպարէզ* շաբաթաթերթը: 1914-1915ին լոյս են տեսնում տեղի բողոքական եկեղեցիների պարբերականները՝ *Ամսագիր* (Առաջին Հայ Երիցական Եկեղեցի), *Բեմ* (Հայ Պանդխտաց Ժողովական Եկեղեցի), *Չանասէր* (Կալիֆորնիայի Հայ Քրիստ. Ջանից Ընկերութեանց Միութիւն): Այսպէս, 1900-1910ականներին ձեւաւորում է հայ պարբերական մամուլը Կալիֆորնիայում՝ Ֆրեզնոյում:

Ֆրեզնօն տասնամեակներ շարունակ, մինչեւ 1940ականները, եղել է Կալիֆորնիայի հայութեան կենտրոնը. այստեղ են լոյս տեսել հայկական գրեթէ բոլոր պարբերականները (1920ականներին սկսած տնտեսական յայտնի Մեծ Ճգնաժամը հող է նախապատրաստել Ֆրեզնոյից Լոս Անջելըս հայերի տեղափոխութեան համար):

Ամերիկացի մարդաբան Ուիլսըն Դալլամ Ուոլիսը Ֆրեզնոյի հայերին նուիրուած իր ուսումնասիրութեան մէջ գրում է. *«Հաւանաբար,*

*աշխարհում ոչ մի քաղաք չի կարող պարծենալ այնքան շատ հայկական թերթերով, կարող խմբագիրներով ու թղթակիցներով, որքան ունի Ֆրեզնոն... Այս թերթերը ոչ միայն գտնում են իրենց տեղը նահանգի ամեն հայ բնատանիքում, այլև դուրս են գալիս նահանգից եւ անգամ երկրից՝ հասնելով աշխարհի միւս կողմերում հիմնուած հայ համայնքներին»:*

Նահանգում հրատարակուող հայկական պարբերականների շարքում գերակշռել են շաբաթաթերթերը, որոնց մի մասն ունի բովանդակային ընդհանուր կառուցուածք: Օրինակ՝ **Հայ Կեանք**, **Հայկական Կեանք**, **Գաղութահայ Լուրեր**, **Հայ Գաղութներ** (հայկական գաղթաշխարհի վերաբերեալ նորութիւններ), **Հայաստան**, **Լուրեր Խորհրդային Հայաստանէն**, **Խորհրդային Հայաստան** (Հայաստանի առաջին Հանրապետութեան, այնուհետեւ՝ Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան քաղաքական, հասարակական, տնտեսական, գիտամշակութային կեանքի վերաբերեալ լուրեր, քննարկումներ), **Տեղական Լուրեր**, **Տեղական** (ամերիկահայ տնտեսական, քաղաքական, հասարակական եւ մշակութային կեանքի վերաբերեալ նորութիւններ, համայնքային իրադարձութիւններ), **Միջազգային Կեանք**, **Քաղաքական** (միջազգային լուրեր) կամ **Վերջին Շաբաթ** (լուսաբանութիւն՝ շաբաթուայ ընթացքում տեղի ունեցած միջազգային դէպքերի), **Ամերիկան Ինչպէս Որ Է** կամ **Ասկէ Անկէ** (ամերիկեան, տեղական եւ միջազգային լուրեր), **Խմբագրական** (քաղաքական, հասարակական, համայնքային իրադարձութիւնների լուսաբանում կամ դրանց վերաբերեալ վերլուծութիւն), **Շնորհակալիք** (շատ յաճախ հանդիպող ազդ, որի միջոցով տուեալ թերթի անձնակազմը տարբեր առիթներով (նուիրատուութիւնների, շնորհատրանքների, ցուակցութիւնների եւն.) իր երախտագիտութիւնն է յայտնում անհատների կամ որեւէ կառոյցի, հաստատութեան, կազմակերպութեան): Բազմաթիւ են հայոց լեզուի, գրականութեան, պատմութեան, մշակոյթի վերաբերեալ նիւթերը («Ի՛նչպէս Կրնանք Պահել Հայ Լեզուն Նոր Սերունդին Մէջ», «Լեզուական Նկատողութիւններ», «Հայոց Հին Գրականութեան Պատմութիւնը», «Դ. Վարուժան», «Մ. Մեծարեւոյց», «Ուիլիլըմ Սարոյեան», «Եղիշէ Եւ Վարդանանց Պատերազմը», «Հայոց Մշակոյթը», «Գաղութահայ Վերաբերմունքը Հանդէպ Թատրոնի», «Կոմիտասի Յիշատակին» եւն.): Ճանաչողական մեծ նշանակութիւն ունեն տարբեր տեսակի ազդերն ու յայտարարութիւնները, որոնց միջոցով կարելի է պատկերացում կազմել համայնքում գործող հաստատութիւնների, համայնքային կեանքի իրողութիւնների, տեղի ունեցող դէպքերի եւ իրադարձութիւնների մասին, ինչպէս, օրինակ՝ «Տաուլըրի Ազգային Գրադարանը բաց է ամեն կիրակի եւ գիրքեր կը տրուին ընթերցասէր ազգայնոց կանոնաւոր կերպով»<sup>10</sup>, կամ՝ «Կ'իմացնեն մեզ, որ շուտով կը բացուի Ֆրեզնոյի հայ

դպրոցը – Ս. Երրորդ[ութիւն] եկեղեցւոյ ներքնայարկը - եւ այդ առիթով կը խնդրուի մեզմէ թելադրել հայ ծնողներուն, որ դրկեն իրենց զաւակները հայերէն գրել կարդալ սորվելու»<sup>11</sup>: Կամ՝ «ԼՈՅՍ ՏԵՍԱԻ “ԱՄՊԱՐԷՉ” ԺՈՂՈՎԱԾՈՒԻ. 325 մեծադիր երեսներով, ճոխ բովանդակութեամբ, եւ 60էն աւելի պատկերներով. գինն է \$1.25. Բացառիկ հրատարակութեանց մէջ ամէնէն բացառիկը կարելի է համարել զայն: Բաժանորդագրուեցէք իսկոյն եթէ չէք ուզեր գրկուիլ գրական ճոխ վայելքէ մը»<sup>12</sup> եւն.:

Ստորեւ ներկայացնում ենք նշուած ժամանակաշրջանում Կալիֆորնիայում լոյս տեսած հայ պարբերական հրատարակութիւնները՝ համապատասխան տեղեկութիւններով: Թէեւ մատենագէտ Յովհաննէս Պետրոսեանը ժամանակին իրաւացիօրէն նկատել է՝ «սպառիչ բիբլիոգրաֆիա ընդհանրապէս գոյութիւն չունի, - քանի որ անհնար է,- գտնել հայ պարբերական մամուլի բոլոր անունները»<sup>13</sup>, այնուամենայնիւ, փորձ է արուել հնարաւորինս ամբողջական եւ ճշգրիտ պատկեր ստանալու:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԱԾՈՒԹԵԱՄԲ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԵՐ

Մեր ուսումնասիրութեան համաձայն՝ առանձին անհատների կողմից հրատարակուող եւ անկախ համարուող որոշ պարբերաթերթեր կա՛մ զաղափարական հիմքում ունեցել են քաղաքական ուղղուածութիւն եւ ի վերջոյ դարձել են կուսակցական, կա՛մ ժամանակի ընթացքում անցել են կուսակցութեան տնօրինութեան տակ: Ուստի դրանք ներկայացնում ենք վերջիններիս շարքում:

Այս իմաստով շատ բնորոշ է *Նոր Կեանք* (սկզբում՝ *Քաղաքացի*), *Միտումն*, *Ասպարէզ* թերթերի օրինակը: 1902ին Էկիներեանի հիմնած *Քաղաքացին* հրատարակուել է մինչեւ 1913, ընդ որում, ըստ հայ մատենագէտների, 1909ից՝ *Նոր Մերունը*<sup>14</sup>, ապա՝ *Նոր Մերունը-Քաղաքացի* անուանումներով:

1914ին Էկիներեանը փոխել է թերթի անունը՝ *Նոր Կեանք*: Այս անունով թերթը հրատարակուել է հինգ տարի (1914-1919) եւ մեծ ճանաչում է ձեռք բերել: Ամերիկեան *Լոս Անջելըս Թրիբյուն* (*Los Angeles Tribune*) թերթի 1918 Նոյեմբերի 4ի համարում գրուած է. «*Ֆրեզնոյում հրատարակուող "Նոր Կեանք" հայերէն շաբաթաթերթը հաւանաբար աշխարհում միակ հրատարակութիւնն է իր տեսակի մէջ, որի տպագրութեան գործը ամբողջութեամբ մէկ մարդու՝ Շ. Էկիներեանի ուսերին է*»<sup>15</sup>: Չլինելով կուսակցական թերթ՝ *Նոր Կեանքը*, այնուամենայնիւ, պաշտպանում էր Ռամկավար Կուսակցութեան դիրքերը՝ քննադատելով Դաշնակցութեանը: Եւ պատահական չէ, որ Էկիներեանի մահից յետոյ՝ 1919ին, թերթն անցնում է Հայ Սահմանադիր Ռամկավար (1921ից՝

Ռամկավար Ազատական) Կուսակցութեանը<sup>16</sup>, որի անդամն էր Էկինեանը: Յետագայում վերջինիս մասին գրում է Ռամկավար Ազատական Կուսակցութեան վարիչ-քարտուղար, 1937ից *Նոր Օր* շաբաթաթերթի խմբագիր Անդրանիկ Անդրեասեանը. «*Անոր խմբագրած Քաղաքացի եւ Նոր Կեանք թերթերուն հաւատարիմ շատաւիղը կամ վերջին անուանակոչումը եղաւ ներկայ Նոր Օրը*»<sup>17</sup>:

1920ին *Նոր Կեանքը* միանում է 1918ից հրատարակուող *Միտուան* անկախ շաբաթաթերթին՝ դառնալով *Նոր Կեանք-Միտուան*: Ճիշտ է՝ *Միտուանը* չէր համարում որեւէ կուսակցութեան, կազմակերպութեան կամ յարանուանութեան պատկանող շաբաթաթերթ, սակայն, ըստ մեր ունեցած տեղեկութիւնների, նիւթական օժանդակութիւն էր ստանում Ֆրեզնոյի մեծահարուստ հայերի, ինչպէս նաեւ տեղի Առաջին Հայ Երիցական, Հայ Պանդխտաց Ժողովական եւ Ս. Երրորդութիւն հայ առաքելական եկեղեցիների անդամներից, խմբագրում էր Բոստոնում հրատարակուող Հայ Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան պաշտօնաթերթ *Ազգի* երբեմնի խմբագիր Մ. Մինասեանի կողմից: Հայ Սահմանադիր Ռամկավար Կուսակցութիւնը քարոզում էր ժողովրդավարութիւն, ինչպէս եւ *Միտուանը*՝ «*դեմոկրատիա ամէն ինչում*»<sup>18</sup>:

Այսպիսով պարզ է դառնում ռամկավարների հովանու ներքոյ երկու թերթերի միացումը՝ *Նոր Կեանք-Միտուան*: Միացեալ այս հրատարակութեան առաջին համարում կարդում ենք. «*Ազգ. Ռամկ. Կուսակցութեան Քալիֆորնիոյ Օրկանը Նոր Կեանք միացած Միտուանի, յետ այսու պիտի հրատարակուի շաբաթը երեք անգամ... Նոր Կեանք-Միտուան բացարձակօրէն ազատական ու ազգայնական ուղղութեամբ պիտի կառչի Ազգ. Ռամկ. Կուսակցութեան գերագոյն սկզբունքներուն վրայ, եւ այժմ շատ աւելի ուղիղ եւ անհամեմատօրէն վեր պիտի մնայ հայրենիքի վերաշինութեան իրական պահանջներու մասին*»<sup>19</sup>:

Ջորջ Բայրըն Քուշեան-կրտսերը Կալիֆորնիայի հայ համայնքին նուիրուած իր աստենախօսութեան մէջ տարբեր առիթներով յղում է տալիս 1923, 1924ի *Նոր Կեանք-Միտուանի*ց<sup>20</sup>: Կարծում ենք՝ սա շփոթմունք է, քանի որ Անդրեասեանի գրքում պատկերուած է *Նոր Կեանք-Միտուանի* խմբագրական եւ տպագրական անձնակազմի լուսանկարը<sup>21</sup>՝ թերթի՝ 1921 Հոկտեմբերի 18ի վերջին համարի հրատարակութեան առիթով, որին յաջորդող համարը լոյս է տեսել արդէն *Նոր Կեանք-Արօր* անուանումով: Թերթը 1921ին դադարել է հրատարակուելուց: Բանն այն է, որ 1921 Հոկտեմբերի 1ին Վերակազմեալ Հնչակեան եւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութիւնները ձուլուել են՝ կազմելով Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը: Սրան յաջորդել է երկու կուսակցութիւնների պարբերաթերթերի միացումը:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան եռօրեայ *Արօրը* հրատարակութիւնից մէկ տարի անց՝ 199րդ համարից յետոյ, միացել է *Նոր Կեանք-Միասնին*<sup>22</sup>, որից յետոյ շաբաթաթերթը կոչուել է *Նոր Կեանք-Արօր*:

1922ին, թերթի գործակից խմբագիր Վահէ Հայկի<sup>23</sup> առաջարկով, պատասխանատու յանձնաժողովը կատարում է վերջնական անուանափոխութիւն<sup>24</sup>. թերթը *Նոր Օր* անուանումով՝ իբրեւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան պաշտօնաթերթ, հրատարակում է մինչ օրս:

Միւս անկախ համարուող շաբաթաթերթը, որ դարձել է կուսակցական, *Ասպարէզն* է: Տարբերութիւնը մէկն էր՝ թերթի կազմութեան կանոնադրութեան երրորդ յօդուածում յստակ նշում է, որ այն «*պիտի խմբագրուի յեղափոխական ոգիով եւ Հ.Յ. Դաշնակցական ուղղութեամբ, առանց սակայն կուսակցութեան օտկան մը ըլլալու*»<sup>25</sup>:

Տարիներ շարունակ *Ասպարէզը* լոյս է տեսել *Ֆրեզնօ Մորնինգ Րիպաբլիքըն* (*Fresno Morning Republican*) եւ *Հերըլդ* (*Herald*) տեղական թերթերի տպարաններում: 1915ին *Ասպարէզի* հիմնադիրները, յայտնուելով նիւթական ծանր կացութեան մէջ (անհաստների համար նիւթապէս դժուար էր թերթի երկարատեւ հրատարակութիւն սպահովելը), որոշել են թերթի հոգատարութիւնը յանձնել ՀՅԴ Կենտրոնական Կոմիտէին:

*Ասպարէզը* Կալիֆորնիայում հայկական միակ թերթն է, որ մշտապէս հրատարակուել է առանց ընդհատումների եւ միեւնոյն անուամբ մինչ օրս: Տարածաշրջանում այն ունեցել է ընթերցողների լայն շրջանակ եւ մեծ ժողովրդականութիւն:

Ուշագրաւ է, որ Կալիֆորնիայում գործող երկու կուսակցութիւնների պաշտօնաթերթերի՝ *Ասպարէզի* ու *Նոր Օրի* հիմնադիր խմբագիրները, հրատարակչական յանձնախմբի անդամները, երբեմն նաեւ յօդուածագիրները եղել են կուսակցական յայտնի գործիչներ ու առաջնորդներ՝ դաշնակցական Սեքլէմեանը, Ասլան Ասլանեանը, Յովհաննէս Գապաքեանը, Պ. Յակոբեանը, ռամկավար Հրաչ Երուանդը, Յակոբ Պօղոսեանը, Արամ Ամիրխանեանը, Վահէ Հայկը եւ այլք:

Վերոյիշեալ պարբերաթերթերը ներկայացնում ենք ըստ ժամանակագրութեան..

*Քաղաքացի*, Ֆրեզնօ 1902-1912: Հիմնադիր խմբագիր՝ Հ. Էկինեան: Շաբաթաթերթ (երբեմն հրատարակուել է ամիսը երկու անգամ), 8 էջ, «Քաղաքացի» Հրատարակչական Ընկերութիւն:

*Ասպարէզ*, Ֆրեզնօ 1908 (1970ից՝ Լոս Անջելըս) - մինչեւ օրս: Հիմնադիր խմբագիր՝ Սեքլէմեան: Ազգային, քաղաքական եւ գրական շաբաթաթերթ, եռօրեայ, 1915ից՝ ՀՅԴ Կենտրոնական Կոմիտէի

պաշտոնաթերթ, 4, 6, ապա՝ 8 էջ, առաւելագոյն տպաքանակ՝ 2,500, «Ասպարէզ» Հրատարակչական Ընկերութիւն:

*Նոր Կեանք*, Ֆրեզնո 1914-1919: Հիմնադիր խմբագիր՝ Հ. Էկինեան: Ազգային, քաղաքական, գրական շաբաթաթերթ (*Քաղաքացիի* շարունակութիւնը), 4, ապա՝ 8 էջ, առաւելագոյն տպաքանակ՝ 1000, «Քաղաքացի» Հրատարակչական Ընկերութիւն: 1919ի Ապրիլից հրատարակուում է Հայ Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան կողմից:

*Միտում*, Ֆրեզնո 1918-1920: Հիմնադիր խմբագիր՝ Մ. Մինասեան: Ազգային, հասարակական շաբաթաթերթ, 16 էջ, «Միտում» Հրատարակչական Ընկերութիւն:

*Արօր*, Ֆրեզնո 1919-1921: Հիմնադիր խմբագիր՝ Հրաչ Երուանդ: Ազգային-քաղաքական, գրական եօթեայ: Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան պաշտոնաթերթ, 4 էջ:

*Նոր Կեանք-Միտում*, Ֆրեզնո 1920-1921: Հիմնադիր խմբագիր՝ Յակոբ Պօղոսեան: Ազգային, քաղաքական եւ գրական եօթեայ, Ազգային Ռամկավարական Կուսակցութեան պաշտոնաթերթ, 8 էջ, «Նոր Կեանք» Հրատարակչական Ընկերութիւն:

*Նոր Կեանք-Արօր*, Ֆրեզնո 1921-1922: Հիմնադիր խմբագիր՝ Յակոբ Պօղոսեան: Ազգային, քաղաքական եւ գրական եօթեայ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան պաշտոնաթերթ, 8 էջ:

*Նոր Օր*, Ֆրեզնո 1922 (1965ից՝ Լոս Անջելըս) - մինչեւ օրս: Հիմնադիր խմբագիր՝ Արամ Ամիրխանեան, գործակից խմբագիր՝ Վահէ Հայկ: Ազգային, քաղաքական եւ գրական եօթեայ (*Նոր Կեանք-Արօրի* շարունակութիւնը), Ռամկավար Ազատական Կուսակցութեան պաշտոնաթերթ, 8 էջ, առաւելագոյն տպաքանակ՝ 2,500, «Նոր Օր» Հրատարակչական Ընկերութիւն:

#### ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Կրօնական առաջին պարբերականները հրատարակուեցին հայ աւետարանական եկեղեցիների կողմից. Այս երեւոյթը պայմանաւորուած էր այդ տարիներին Կալիֆորնիայում նրանց հետեւորդների մեծ թուաքանակով:

Ֆրեզնոյում գործող Առաջին Հայ Երիցական Եկեղեցին ունեցաւ իր պաշտոնաթերթը՝ *Ամսագիր*, որ հրատարակուեց 1914ին<sup>26</sup>, միամսեայ դրութեամբ: 1915ին հրատարակուեցին նաեւ *Ջանասէր* ամսահանդէսը եւ *Բեմ* ամսագիրը՝ իբրեւ Կալիֆորնիայի Հայ Քրիստ. Ջանից Ընկերութեանց Միութեան եւ Հայ Պանդխտաց Ժողովական Եկեղեցու պաշտոնաթերթեր: Նոյն շրջանի բողոքական վերջին հրատարակութիւնը եղաւ *Փրկութիւն* ամսաթերթը, որը սկսելով 1921ին գործունէութիւն

ծաւալեց շուրջ 4 տասնամեակ՝ Հայ Աւետարանական Եկեղեցու հովանաւորութեամբ:

Մինչեւ 1920ականների սկիզբը Հայ Առաքելական Եկեղեցու հրատարակած թերթերը (*Էջմիածին, Օրհածան*) գոյատևել են ամենաշատը մէկ տարի: 1920ականների վերջին պատկերը փոխուեց: Հայ Առաքելական Եկեղեցին հաստատուն եւ առաջնային տեղ գրաւեց Կալիֆորնիայի հայութեան կեանքում, եւ նրա պարբերաթերթերը դարձան առաւել երկարակեաց (*Փարոս՝ Փարոս Հայաստանեաց, Շողակաթ*). յետագայ տարիներին նաեւ գերակշռեցին թուով:

Կրօնական բնոյթի պարբերաթերթերի շարքում զետեղել ենք նաեւ *Կենաց Ճամբայ* ամսաթերթը, որի մասին հակիրճ տեղեկութիւններ կան հայ պարբերական մամուլի մատենագիտական որոշ ցանկերում<sup>27</sup>:

Ֆրեզնոյի հայութեան վերաբերեալ առաջին ատենախօսութեան հեղինակի՝ Լա Պիերի կարծիքով կրօնական թերթերը գրեթէ դերակատարութիւն չեն ունեցել համայնքային կեանքում, հայ հանրային կարծիքը արտայայտելու կամ ուղղորդելու գործում<sup>28</sup>:

Թերեւս կարելի է համաձայնել հեղինակի հետ՝ նկատի առնելով, որ կուսակցական թերթերը արդէն արտայայտում եւ ձեւաւորում էին տեղի հայութեան ազգային-քաղաքական, ընդհանրապէս հասարակական միտքը: Սակայն չի կարելի չնկատել, որ կրօնական որոշ հաստատութիւնների պարբերականներ, բացի քրիստոնէական, եկեղեցական նիւթերից, քննարկել են նաեւ կրթական, դաստիարակչական, բարոյահոգեբանական հարցեր, որոշ չափով անդրադարձել ազգային-քաղաքական, համայնքային իրողութիւնների: Բերենք մի քանի օրինակ: Սուրբ Երրորդութիւն Եկեղեցին, որ հիմնադրութիւնից սկսած երկար տարիներ Ֆրեզնոյի հայութեան համար եղել է Մայր Եկեղեցի, զգալիօրէն աջակցել է ազգային հարցերի քննարկմանը: 1918ին եկեղեցու պաշտօնաթերթ *Էջմիածինը* գրում է. «*Հայ Ազգային Միութեան կողմանէ որոշուած մէկ միլիոն տոլարի հանգանակութեան իր ուշացուցած բաժինը պիտի տայ Քալիֆորնիոյ Հայութիւնը... Եւ ում պիտի տանք, մեր հարազատներուն, մեր եղբայրներուն ու քոյրերուն, հայրերուն ու մայրերուն, որոնք երէկ հարուստ ու երջանիկ, իսկ այսօր անապատները քշուած, հազիւ ցնցոտիներով ծածկուած, կենդանեաց աղբերուն մէջ գարիի հատեր կը փնտռեն*»<sup>29</sup>: 1910ականների վերջին ազգային նշանակութիւն ունեցող ինդիւրներից էր հայերի եւ տեղացի ամերիկացիների փոխարաբերութիւնը: «*Թող այգեպանը՝ չամիչի ընկերութեան, վաճառականը՝ վաճառականական միութեան, եկեղեցականը՝ եկեղեցական բազմաթիւ կազմակերպութեանց միջոցաւ իր օգտակարութիւնը ի յայտ բերէ եւ տեղացիներու մէջ այսպէսով*

նպաստաւոր վարկ յառաջ բերուի մեր բազմակարօտ ազգին համար»<sup>30</sup>: Որոշակիօրէն լուսարանում էր նաեւ համայնքային կեանքը. «Եղեմի»<sup>31</sup> հայ գաղութը վերջին տարիներու այգեպաններու ենթարկուած տնտեսական տազնապի հետեւանքով թուով պակասած է, բայց եկեղեցական ու ազգային կազմակերպութիւններ կը պահեն իրենց գոյութիւնը աւելի եռանդով»<sup>32</sup>: Մէկ այլ օրինակ՝ «Հայ Թարգմանչաց յիշատակութեան առթիւ Հոկ. 11ին, Գիրակի օր, ինչպէս թեմի միւս եկեղեցիներուն մէջ, նոյնպէս ի Ֆրեզնօ տեղի ունեցաւ հանդիսաւոր տօնակատարութիւն... Ինչպէս Սահակ-Մեսրոպի տօնին, նմանապէս Թարգմանչաց յիշատակութեան առթիւ Առաջնորդարանն է, որ նախաձեռնարկ եղաւ տեղ տեղ ասանկ հանդէսներու կազմակերպութեան, իր շրջաբերականով եւ բարոյական աջակցութեամբ: Այս տեսակ հանդէսներ կը նպաստեն մեծապէս ոչ միայն Ազգային գիտակցութիւն մշակելու գաղութիս մէջ, այլ եկեղեցւոյ շուրջ խանդավառութիւն ստեղծելու նաեւ»<sup>33</sup>: Այսպիսով, լինելով հայապահպան կառոյց, եկեղեցին, անմասն չմնաց համայնքային կեանքից:

Ստորեւ տրուում է կրօնական պարբերաթերթերի ժամանակագրական ցանկը:

*Ամսագիր*, Ֆրեզնօ 1914-1918: Կրօնական ամսաթերթ, Առաջին Հայ Երիցական Եկեղեցու պաշտօնաթերթ:

*Ձանասէր*, Ֆրեզնօ 1915-1923: Հիմնադիր խմբագիր՝ Սեդրակ Երամեան: Կրօնական, ազգային, ամսեայ հանդէս, Կալիֆորնիայի Հայ Քրիստ. Չանից Ընկերութեանց Միութեան (բողոքական) պաշտօնաթերթ, 16-32 էջ:

*Բեմ*, Ֆրեզնօ 1915-1918: Կրօնական ամսագիր, Հայ Պանդիստաց Ժողովական Եկեղեցու պաշտօնաթերթ:

*Էջմիածին*, Ֆրեզնօ 1918-1919: Հիմնադիր խմբագիր՝ Վարդան Օ. Վրդ. Գասպարեան: Կրօնա-բարոյական ամսաթերթ, Ս. Երրորդութիւն Հայ Առաքելական Եկեղեցու պաշտօնաթերթ, 8 էջ:

*Փրկութիւն*, Ֆրեզնօ 1921-1959: Հիմնադիր խմբագիր՝ Վահրամ Պ. Թահմիսեան: Կրօնական ամսաթերթ, Հայ Աւետարանական Եկեղեցու հրատարակութիւն, ոչ-յարանուանական, 18-20 էջ (անգլերէն էջերով), «Փրկութիւն» Հրատարակչական Ընկերութիւն:

*Օրհասն*, Սան Ֆրանսիսկօ 1924: Հիմնադիր խմբագիր՝ Ս. Օոցիկեան: Կրօնական շաբաթաթերթ, Հայ Առաքելական Եկեղեցու հրատարակութիւն, 16 էջ:

*Փարոս* (1929ից՝ նաեւ *Փարոս Հայաստանեաց* անունով): Ֆրեզնօ 1927-1937: Հիմնադիր խմբագիր՝ Գրիգոր Սարաֆեան: Կրօնական, եկեղեցագիտական եւ ազգային ամսաթերթ: Հայ Եկեղեցասիրաց

Միութեան պաշտօնաթերթ (Հայ Առաքելական Եկեղեցի), 24 էջ, «Փարոս» Հրատարակչական Ընկերություն:

*Շողակաթ*, Ֆրեզնո 1928-1935: Հիմնադիր խմբագիր՝ Գարեգին Եպս. Խաչատուրեան: Կրօնական ամսաթերթ, Հայ Առաքելական Եկեղեցու հրատարակություն:

*Կենաց Ճամբայ*, Ֆրեզնո 1930-1931 կամ 1932: Կրօնական, ոչ-յարանուանական ամսաթերթ:

1900-1930ականներին Կալիֆորնիայում լոյս են տեսել նաև տարաբնույթ՝ ազգային, քաղաքական, գրական, հասարակական, երգիծական, գիտատնտեսական անկախ շաբաթաթերթեր, տարեգիրք-տարեցույցներ, պարբերական այլ հրատարակություններ:

Մրանց մեծ մասը կարճ կեանք է ունեցել՝ 1-5 տարի: Բացառություն է *Մշակը*, որը հրատարակուել է 32 տարի: Իր 2,500 տպաքանակով *Մշակը* չի զիջել *Ասպարեզին* եւ *Նոր Օրին*: Թեև շաբաթաթերթը հրատարակութեան ողջ ընթացքում համարուել է անկախ եւ իր տիտղոսաթերթի վրայ տարիներ շարունակ գրել է՝ «*Մշակ. Հայկական Միակ Անկախ Երկշաբաթաթերթ*»<sup>34</sup>, այնուամենայնիւ տարբեր առիթներով մեղադրուել է կուսակցական լինելու մէջ: Լա Պիերը գրում է. «*Հայաստանի քաղաքական կողմնորոշման վերաբերեալ բանավեճերի արդիւնքում ստեղծուեց մէկ այլ անկախ թերթ՝ Մշակը: Այն միւս թերթերի նման գերազանցապէս կապուած է քաղաքականութեան հետ*»<sup>35</sup>: *Մշակի* կուսակցական պատկանելիութեան հարցի մասին առաւել յստակ գրում է Ռամկավար Ազատական Կուսակցութեան պաշտօնաթերթ *Նոր Օրը*՝ «Մի Քանի Խօսք Դաշնակցական Օրկան Մշակ «Անկախ»? Թերթին» յօդուածում. «*Պարոն, թէ որ «անկախ»?, «ազատ»? թերթի խմբագիրն էք, ինչո՞ւ բացի դաշնակցական թերթերէն, միւս բոլոր թերթերը կը քննադատէք*»<sup>36</sup>: Կարծում ենք՝ *Մշակի*՝ «դաշնակցական» լինելու մատնանշումը պայմանաւորուած է այն հանգամանքով, որ թերթը յաճախ տպագրել է կուսակցութեան շահերը պաշտպանող կամ կուսակցութեան գաղափարախօսութիւնը արտայայտող յօդուածներ: Բոլոր դէպքերում, ե՛ւ *Մշակը*, ե՛ւ միւս անկախ համարուող պարբերաթերթերը, որոնք ունեցել են յստակ ուղեգիծ, մեծապէս նպաստել են հայ ազգային կեանքի ձեւաւորմանը Կալիֆորնիայում, թեև որեւէ կուսակցութեանը գաղափարակից լինելու հանգամանքը յաճախ մնացել է անթաքոյց:

Տարաբնույթ անկախ պարբերաթերթերի ժամանակագրական ցանկը տրւում է ստորեւ:

*Ծիծաղ*, Ֆրեզնո 1921: Հիմնադիր խմբագիր՝ Արտաշէս Պերպերպաշեան: Երգիծական երկշաբաթաթերթ, 16 էջ, «Ծիծաղ» Հրատարակչական Ընկերություն:

*Յուշարար Հայ Այգեպաններու*, Ֆրեզնո 1921: Գիւղատնտեսական կիսամեայ հանդէս:

*Աւետիս*, Ֆրեզնո 1921: Հիմնադիր խմբագիր՝ Մելիք Շահ (Արմենակ Մելիքեան): Երգիծական տարեցոյց, 128 էջ, «Ասպարէզ» Հրատարակչական Ընկերութիւն:

*Արշալոյս*, Ֆրեզնո 1922: Հիմնադիր խմբագիր՝ Մելիք Շահ (Արմենակ Մելիքեան): Երգիծական տարեգիրք (*Աւետիսի* շարունակութիւնը), 160 էջ:

*Մշակ*, Ֆրեզնո 1925-1957: Հիմնադիր խմբագիր՝ Լեւոն Լիւլէջեան: Ազգային, քաղաքական, գրական երկշաբաթաթերթ, 4 էջ, առաւելագոյն տպաքանակ՝ 2,500:

*Նոր Արօր*, Ֆրեզնո 1926: Ազգային, քաղաքական, գրական եռօրեայ, 4 էջ:

*Թարգման*, Լոս Անջելըս 1926: Հիմնադիր խմբագիր՝ Միհրան Էլուան, շաբաթաթերթ:

*Հորիզոն*, Լոս Անջելըս 1929: Հիմնադիր խմբագիր՝ Միհրան Էլուան: Ազգային, քաղաքական, գրական շաբաթաթերթ, 4 էջ:

*Արմենիա*, Լոս Անջելըս 1929-1932: Հիմնադիր խմբագիր՝ Միհրան Էլուան: Ազգային, քաղաքական, գրական շաբաթաթերթ (*Հորիզոնի* շարունակութիւնը), 4 էջ, որից մէկը՝ անգլերէն<sup>37</sup>:

*Հայ Լրաբեր*, Լոս Անջելըս 1932-1935, ազատական անկախ շաբաթաթերթ, 4 էջ, հայերէն եւ անգլերէն<sup>38</sup>:

*Արմինիքն Լիփորթըր (Armenian Reporter)*<sup>39</sup>, Լոս Անջելըս 1932-1935: Հիմնադիր խմբագիր՝ Լիթեր Յակոբեան: Ազգային, հասարակական շաբաթաթերթ, հայերէն եւ անգլերէն, առաւելագոյն տպաքանակ՝ 1700<sup>40</sup>:

*Դիտակ*, Ֆրեզնո 1933-1939: Հիմնադիր խմբագիր՝ Սեդրակ Երամեան: Հասարակական պարբերաթերթ, հայերէն եւ անգլերէն<sup>41</sup>:

*Նոր Ուղի*, Լոս Անջելըս 1935-1939: Հիմնադիր խմբագիր՝ Մ. Մուրադեան: Շաբաթաթերթ, 4, ապա՝ 8 էջ, ունի անգլերէն յօդուածներ:

Մինչեւ Երկրորդ Համաշխարհային Պատերազմը Կալիֆորնիայի հայ պարբերական մամուլում առաւել մեծ տեղ էր յատկացում հայութեան համար բախտորոշ երկու հարցերի: Առաջինը, բնականաբար, 1915ի Ցեղասպանութիւնն էր, իսկ երկրորդը՝ 1918ի Հայաստանի առաջին Հանրապետութեան, երկու տարի անց՝ Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան յառաջացումը:

Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում, մանաւանդ դրանից յետոյ, Կալիֆորնիայի, ինչպէս եւ ողջ ԱՄՆի հայութիւնը օգնութեան ձեռք մեկնեց հարիւր-հազարաւոր հայ վտարանդիների: Այդ գործում շատ կարեւոր էր մամուլի դերակատարութիւնը. այն ոչ միայն պարբերաբար հաղորդում էր լուրեր Ցեղասպանութիւնից փրկուած

հայութեան մասին, այլև յորդորում էր ամէն կերպ լինել նրա կողքին: Երկար տարիներ հայ պարբերական մամուլը նմանուեց տարագիր հայրենակիցներին օժանդակելու, հանգանակութիւններ կազմակերպելու կոչերի ցուցատախտակի: Ահա այդպիսի կոչի մէկ օրինակ. «Սան Ֆրանսիսքօի եւ շրջակայքի հայոց 1915 Հոկտ. 23ին, Սան Ֆրանսիսքօի Հայկ. Միութեան, Հ. Յ. Դաշնակցութեան կօմիտէի եւ միւս կազմակերպութեանց համաձայնութեամբ տեղի ունեցած հանգանակութեան ամփոփ հաշիւն է հետեւեալը. – Ժողովասարահի մէջ եւ դուռը ի նպաստ կարօտելոց ու կամաւորաց խոստացուած գումարն է \$ 2020.85 ուրկէ գանձուած է միայն \$1941.65...»<sup>42</sup>: Միաժամանակ հայկական թերթերը բերում էին նորանոր վկայութիւններ թուրքական իշխանութիւնների ոճրային քաղաքականութեան մասին: 1919ին Ասպարէզը մեջբերում է Նիւ Եորքի *Ինինգ Սան (Evening Sun)* թերթում տպագրուած թուրք պաշտօնեայի խօսքերը. «Այսօր ունինք Հայկական խնդիր մը - սակայն չպիտի ունենանք Հայաստան: Մենք ցիրուցան պիտի ընենք Հայերը, պիտի անդամատենք անոնց քաղաքները - եւ հետեւաբար Հայ ազգ մը գոյութիւն չպիտի ունենայ: Հայաստանը Թիւրք կայսրութեան մէկ մասը պիտի ըլլայ»<sup>43</sup>: Նման պայմաններում հայկական պետութեան ստեղծման գաղափարը մնում էր փրկութեան միակ հանգրուանը. «Երեսուն տարիներու յեղափոխական պայքարին մէջ փորձուած հայութիւնը առնական ժեստով մը նետուեցաւ այս անհաւասար պայքարին մէջ, եւ արեան գնով՝ ստեղծեց ազատ եւ անկախ հայրենիք մը. – ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ»<sup>44</sup>: Սակայն թէ՛ «Արարատեան» Հանրապետութիւնը, թէ՛ Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւնը ստեղծման առաջին իսկ օրերից յայտնի պատճառներով յայտնուեցին ընկերային-տնտեսական ծանր վիճակում: Ամերիկահայութիւնը որպէս այդ ժամանակ աշխարհասփիւռ հայութեան առաւել բարեկեցիկ հատուած, իր պարտքը համարեց հնարաւորինս աջակցել այս անգամ արդէն հայրենաբնակ հայ ժողովրդին. «ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՄԵԾ ԺՈՂՈՎ տեղի պիտի ունենայ ի նպաստ Հայաստանի սովելոց, - գրում է Ասպարէզը:– Ամէն սրտացաւ Հայ կը հրաւիրուի անպատճառ ներկայ ըլլալու այս յուժ կարեւոր ժողովին ու իր նուիրական պարտքը կատարելու Հայաստանի Սովեալներուն հանդէպ»<sup>45</sup>: Նոյնչափ մտահոգ էր նաեւ Նոր Օրը. «Մեր երկրի կարիքները շատ են, եւ մեզմէ շատ գործ կը պահանջուի»<sup>46</sup>:

Սակայն հայրենաբնակ հայութեան ճակատագրով մտահոգուելը մի բան էր, Հայաստանի խորհրդայնացման հարցի շուրջ սկզբունքորէն տարբեր դիրքորոշում ունենալը՝ մէկ այլ: Պատմաբան Էդուարդ Մելքոնեանը Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների ձեւաւորման եւ զարգացման մասին գրում է. «Սփիւռքում սկիզբ առած քաղաքական

առճակատման հիմքում ընկած էր Հայաստանի հետ յարաբերուելու գլխաւոր չափանիշի ընտրութիւնը»<sup>47</sup>: Հ.Յ. Դաշնակցութեան համար անընդունելի էր Խորհրդային Հայաստանի իշխանութիւնների քաղաքական գաղափարախօսութիւնը, իսկ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը առաջնային համարեց Հայաստանի գոյութեան փաստը ընդհանրապէս՝ փորձելով սերտ յարաբերութիւններ հաստատել վերջինիս հետ: Այս ամէնի արդիւնքում՝ Սփիւռքում ձեւաւորուեց քաղաքական անհամերաշխ մթնոլորտ: Այդ խնդրի ամենակարեւոր դրսեւորումներից մէկը եղաւ 1933ին Դեկտեմբերին Նիւ Եորքում ամերիկահայոց հոգեւոր առաջնորդ Ղեւոնդ Արք. Դուրեանի սպանութիւնը<sup>48</sup>, որը խորացրեց Հայ Առաքելական Եկեղեցու պառակտումը նախ ԱՄՆում, իսկ յետագայում՝ ամբողջ Սփիւռքում: Ազգային-քաղաքական այս հարցերը բուռն քննարկումների առիթ էին դառնում Կալիֆորնիայի հայ պարբերական մամուլում: Ճիշտ է՝ մօտեցումը խիստ տարբեր էր. քաղաքական այս կամ այն երեւոյթի վերաբերմամբ հայկական մամուլի արձագանգը պայմանաւորուած էր կուսակցական, գաղափարական պատկանելիութեամբ:

1918ից յետոյ յետպատերազմեան քաղաքական իրադարձութիւնները՝ յատկապէս 1922-23ի Լոզանի Խորհրդաժողովը, ժամանակաւորապէս մարեցին հայութեան՝ Արեւմտեան Հայաստան վերադառնալու յոյսերը: Հայութեան կեանքն ընթացաւ երկու ուղղութեամբ.-

Ա. Կալիֆորնիայի հայութիւնը սկսեց առաւել եռանդուն կազմակերպել համայնքային կեանքը. եթէ մինչեւ 1915 Ֆրեզնոյում լոյս էր տեսնում մօտ հինգ պարբերաթերթ, ապա դրանից յետոյ պարբերաթերթերի թիւը կտրուկ աճում է՝ 1915-1930ականներին զերազանցելով երկու տասնեակը:

Բ. Օրըստօրէ աւելի էր մեծանում ամերիկեան հասարակութեանը, ամերիկեան միջավայրին համարկուելու, այդ միջավայրից չտարբերուելու ձգտումը: Այս հանգամանքներում որոշակիօրէն փոխուեց հայ պարբերական մամուլի դերը: 1930ականների սկզբին Կալիֆորնիայի հայութեան մի մասը սկսեց նախապատուութիւն տալ տեղական անգլիալեզու թերթերին: Միեւնոյն ժամանակ հայկական որոշ թերթերում սկսեցին պարբերաբար յայտնուել անգլերէն յօդուածներ, ամբողջութեամբ անգլերէն էջեր (*Արմինիքն Ըրիտրթըր*՝ 1932-1935, *Դիտակ*՝ 1933-1939, *Նոր Ուղի*՝ 1935-1939 եւն.): Երեւոյթը պայմանաւորուած էր նաեւ մայրենի լեզուից աստիճանական նահանջով: Ըստ Մերթու Ա. Ջընդեանի՝ Կալիֆորնիայի հայութեան ուժացման եւ խառնամուսնութիւնների վերաբերեալ ուսումնասիրութեան՝ հայերէնով էր հաղորդակցում Կալիֆորնիա գաղթած հայութեան առաջին սերնդի

91,2%ը, երկրորդ սերնդի՝ 84,9%ը: Հայկական թերթեր ստացել է առաջին սերնդի 52,9%ը, իսկ երկրորդ սերնդի՝ 30,4%ը<sup>49</sup>: Իր հերթին, Լա Պիերի կատարած վիճակագրությունը ցոյց է տալիս, որ 1930ականների սկզբին ֆրեզնոյաբնակ 105 հայերի մօտ կէտը նախընտրությունը տուել է անգլիալեզու թերթերին, մեկ քառորդը ընթերցել է միայն հայկական թերթեր, իսկ մնացածը՝ երկուսն էլ<sup>50</sup>:

Այս բոլորով հանդերձ՝ վստահաբար կարելի է ասել, որ Կալիֆորնիայի հայ պարբերական մամուլը իր գործունեության առաջին երեք տասնամեակում մեծ դեր կատարեց տեղի հայության ազգային-քաղաքական, ազգային-հասարակական միտքը ձևավորելու գործում՝ դրանով իսկ դառնալով նաև կարևոր աղբյուր Կալիֆորնիայի հայության պատմության ուսումնասիրության համար:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Ե.Խ. Ռշտունի, *Մշակ*, Ֆրեզնո, 1939, թիւ 14, № 1378, էջ 1:

<sup>2</sup> Տէ՛ւ՝ R. Tracy LaPiere, “The Armenian Colony of Fresno: A Socio-Psychological Study of Prejudice” (Unpublished Ph. D. dissertation, Department of Sociology), Stanford University 1930. նաև՝ Ch. Mahakian, “History of the Armenians in California. A Thesis”, California 1935. նաև՝ R. Mirak, *Torn between Two Lands: Armenians in America 1890 to World War I*, Massachusetts, Harvard University Press, 1983. նաև՝ Anny Bakalian, *Armenian-Americans: From Being to Feeling Armenian*, New Brunswick, London, Transaction Publishers, 1993. նաև՝ B. Bulbulian, *The Fresno Armenians: History of a Diaspora Community*, Fresno, 2000. նաև՝ Քնարիկ Աւագեան, *Ամերիկայի Միացեալ Նահանգների Հայ Գաղութի Պատմությունը (Սկզբնաւորումից Մինչև 1924թ.)*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատ., Երևան, 2000. նաև՝ G. B. Kooshian Jr., “The Armenian Immigrant Community of California: 1880-1935”, dissertation, Los Angeles, 2002. նաև՝ Ռուբինա Փիրումեան, Քնարիկ Աւագեան, «Ամերիկայի Միացեալ Նահանգներ», *Հայ Սփիւռք Հանրագիտարան*, Երևան, Հայկական Հանրագիտարան Հրատ., 2003 եւն.: Բացի այդ՝ Շ. Ռ. Կարապետեան, *Լիակատար Ցուցակ Հայերէն Լրագիրներու, Որոնք Կը Գտնուին Միիթարեան Մատենադարանին Մէջ Ի Վիեննա (1794-1921)*, Վիեննա, 1924. նաև՝ Գարեգին Լեւոնեան, *Հայոց Պարբերական Մամուլը. Լիակատար Ցուցակ Հայ Լրագրութեան Սկզբից Մինչև Մեր Օրերը (1794-1934)*, Երևան, Պետհրատ, 1934. նաև՝ Յովհաննէս Պետրոսեան, *Հայ Պարբերական Մամուլի Բիրլիոգրաֆիա, Հատոր 2 (1900-1956)*, Երևան, Պետգրապատ, 1957. նաև՝ Ամալիա Կիրակոսեան, *Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտություն (1794-1967). Համահաւաք Ցանկ*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Միսսնիկեանի Անուան Հանրապետական Գրադարան, 1970. նաև՝ Մանուէլ Ա. Բաբլոյեան, *Հայ Պարբերական Մամուլը. Մատենագիտական Համահաւաք Ցանկ (1794-1980)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1986 եւն.:

<sup>3</sup> Արսէն-Տիրան, «Ամերիկահայ Մամուլը», *Ամերիկահայ Տարեցոյցը, Ա. Տարի*, խմբ. Մուշեղ Եպիսկոպոս, Պոստոն, Կիլիկիա Տպարան, 1912, էջ 127:

<sup>4</sup> Mirak, էջ 38:

<sup>5</sup> Տե՛ս՝ <http://www.hayk.net/destinations/fresno-ca/>:

<sup>6</sup> *Սուպարէզ. Ժողովածու Տասնամեակի Առթիւ (1908-1918)*, Ֆրեզնո, 1918, էջ 15:

<sup>7</sup> Mahakian, էջ 70:

<sup>8</sup> Անդրանիկ Անդրեասեան, *Պատմութիւն Ռամկավար Ազատական Կուսակցության Ամերիկայի Արեւմտեան Շրջանակի*, Լոս Անճելըս, Նոր Օր, 1981, էջ 29:

<sup>9</sup> W. D. Wallis, *Fresno Armenians (to 1919)*, Lawrence 1965. նաեւ՝ Armenian Assembly of America, *Fresno Centennial*, Fresno, 1985, էջ 42:

<sup>10</sup> *Սուպարէզ*, 1931, թիւ 1452, № 21, էջ 3:

<sup>11</sup> *Սուպարէզ*, 1929, թիւ 1373, էջ 2:

<sup>12</sup> *Ջանասէր*, 1918, էջ 181:

<sup>13</sup> Պետրոսեան, էջ 5:

<sup>14</sup> *Սուպարէզ* թերթի 10ամեակին նուիրուած ժողովածուի մէջ կարդում ենք համանուն թերթի մասին, որը հրատարակուել է միեւնոյն ժամանակ եւ գոյատեւել երկու-երեք ամիս. «Այս ընթացքին առաջին ու գործնականապէս հակառակողները տեղիս կօմիտէի մէկ քանի ընկերները եղան, իրարու մէջ 200-300 տողար հաւաքելով Նոր Սերունդ անուն թերթ մը հրատարակելով *Սուպարէզի դէմ*» (Ա. Թֆէնքճեան, «Կուսակցավեճեր», *Սուպարէզ. Ժողովածու Տասնամեակի Առթիւ (1908-1918)*, Ֆրեզնո, 1918, էջ 208): Հնարաւոր է ենթադրել, որ 1909ի *Նոր Սերունդը* կապ չունէր Էկիւնեանի հետ եւ հրատարակում էր վերոյիշեալ ընդդիմադիր դաշնակցականների կողմից: Գուցէ նոյն թուականին այն միացել է *Քաղաքացիին՝ դառնալով Նոր Սերունդ-Քաղաքացի*, եւ հաւանաբար այդ է պատճառը, որ մատենագիտները *Նոր Սերունդը* կապում են Էկիւնեանի անուան հետ: Սոյն ուսումնասիրութեան ընթացքում թերթի՝ *Նոր Սերունդ* եւ *Նոր Սերունդ-Քաղաքացի* անուանումներին հանդիպել ենք միայն հայ պարբերական մամուլի մատենագիտական ցանկերում (Լեւոնեան, էջ 60. նաեւ՝ Պետրոսեան, էջ 164. նաեւ՝ Բարլոյեան, էջ 79 եւն.): Մեր ձեռքի տակ ունեցել ենք *Քաղաքացի* թերթի միայն 1902ի եւ 1904ի համարները: Այսպիսով, խնդիրը առանձին պարզաբանման կարիք ունի:

<sup>15</sup> Mahakian, էջ 71:

<sup>16</sup> Տե՛ս <http://noror.org/2013/08/16/hello-world/>:

<sup>17</sup> Անդրանիկ Անդրեասեան (1909-1996), բնիկ չմշակաւագցի, արձակագիր, խմբագիր, քաղաքական գործիչ: Հեղինակ է վեպերու եւ պատմուածքներու հատորներու՝ *Սպիտակ Արդարութիւն*, *Տարագիր Երկինքի Տակ*, *Անմարմին Մէր*, *Գերեզման Եւ Յարութիւն* եւն.: Անդրեասեան, էջ 29:

<sup>18</sup> Wallis, էջ 47:

<sup>19</sup> «Նոր Կեանք-Միսուն Միացած», *Նոր Կեանք-Միսուն*, 1920, թիւ 5, № 257, էջ 1:

<sup>20</sup> Kooshian, էջ 321, 323, 324, 476 եւն.:

<sup>21</sup> Անդրեասեան, էջ 37:

<sup>22</sup> Կարապետեան, էջ 14:

- <sup>23</sup> Վահե Հայկ (1890-1983), բուն անունով Վահե Տինճեան, բնիկ խարբերոցի արձակագիր, խմբագիր: Հեղինակ է *Հայրենի Օրհան* պատմուածքներու հատորներուն եւ *Խարբերոցի Եւ Անոր Ոսկեղէն Դաշտը* ուսումնասիրութեան:
- <sup>24</sup> Mahakian, էջ 71:
- <sup>25</sup> *Ասպարէզ. Ժողովածու Տասնամեակի*, էջ 10:
- <sup>26</sup> *Ամսագիր* թերթի վերաբերեալ տեղեկութիւններ կան Թորոս Խունկեանի՝ Ֆրեզնոյի հայ համայնքին նուիրուած մի յօդուածում (T. B. Khungian, “Origins and Development of the Fresno Armenian Community to the 1918 year”, *The Armenian Review*, February, 1979, vol. XXXI, № 2-122, էջ 171): Հեղինակի բերած որոշ տուեալներից պարզ է դառնում, որ թերթը հրատարակուել է 1914ին: Խունկեանը գրում է մինչեւ 1918 լոյս տեսած պարբերականների մասին: Չի բացառում, որ *Ամսագիրը* հրատարակուել է նաեւ դրանից յետոյ: Թերթի մասին խօսում է նաեւ 1915ին, *Ասպարէզում* («Տեղական», *Ասպարէզ*, 1915, թիւ 7, № 355, էջ 8):
- <sup>27</sup> Պետրոսեան, էջ 444. նաեւ՝ Բարլոյեան, էջ 183 եւն.:
- <sup>28</sup> LaPiere, էջ 322:
- <sup>29</sup> «Մեծ Հանգանակութեան Շուրջը», *Էջմիածին*, Ֆրեզնո, 1919, թիւ 2, № 1, էջ 103:
- <sup>30</sup> «Մենք Եւ Ամերիկացիներ», *Ջանասէր*, Ֆրեզնո, 1917, թիւ 3, № 13, էջ 37:
- <sup>31</sup> Ֆրեզնոյից 3-4 տասնեակ մղոն դէպի հարաւարեւելք գտնուում է Եդեմ գիւղը, որը 1910-1920ականներին եղել է խիստ հայաբնակ: Կալիֆորնիայի տնտեսական ճգնաժամի հետեւանքով գիւղատնտեսութեամբ զբաղուող տեղի հայութիւնը աստիճանաբար հեռացել է Եդեմից՝ հաստատուելով Սան Ֆրանսիսկոյում, Լոս Անջելըսում եւ այլուր:
- <sup>32</sup> Թղթակից, [«Անվերնագիր»], *Փարոս*, Ֆրեզնո, 1937, թիւ 1, № 3, էջ 68:
- <sup>33</sup> «Հայ Սշակոյթի Տօնը», *Փարոս*, Ֆրեզնո, 1928, թիւ 2, № 11, էջ 253:
- <sup>34</sup> *Սշակ*, Ֆրեզնո, 1930, թիւ 5, № 488, էջ 2:
- <sup>35</sup> LaPiere, էջ 322:
- <sup>36</sup> Մ. Մարութեան, «Մի Քանի Խօսք Դաշնակցական Օրկան Սշակ «Անկախ» Թերթին», *Նոր Օր*, Ֆրեզնո, 1934, թիւ 12, № 176, էջ 1:
- <sup>37</sup> Պետրոսեան, էջ 435. նաեւ՝ Բարլոյեան, էջ 178:
- <sup>38</sup> Բարլոյեան, էջ 197:
- <sup>39</sup> 1967ին Նիւ Եորքում լոյս է տեսել համանուն շաբաթաթերթ (<http://www.reporter.am/about-us>):
- <sup>40</sup> Mahakian, էջ 72:
- <sup>41</sup> Բարլոյեան, էջ 202:
- <sup>42</sup> Խոսքով Բոկեան, «Սան Ֆրանսիսքոյի Եւ Շրջակայքի Հայոց», *Ասպարէզ*, Ֆրեզնո, 1916, թիւ 8, № 408, էջ 6:
- <sup>43</sup> «Տր. Մէլնի Տեղեկագրութիւնները («Լիթըրերի Տայճէութ»էն)», *Ասպարէզ*, Ֆրեզնո, 1919, թիւ 11, № 564, էջ 1:
- <sup>44</sup> «Պաշտօնական Կոչ Ամերիկահայ Գաղութին», *Ասպարէզ*, Ֆրեզնո, 1919, թիւ 11, № 547, էջ 1:
- <sup>45</sup> *Ասպարէզ*, Ֆրեզնո, 1919, թիւ 11, № 564, էջ 1:
- <sup>46</sup> «Կոչ Ամերիկահայութեան», *Նոր Օր*, Ֆրեզնո, 1925, թիւ 4, № 50, էջ 1:

- 
- <sup>47</sup> Էդուարդ Մելքոնեան, «Հայ Սփիւոք», *Հայ Սփիւոք Հանրագիտարան*, էջ 14:
- <sup>48</sup> Լէյլէկեան և Սարգիսեան Առաջին Կարգի Ոճրագործ... («Ֆրեզնո Պի»ի 14 Յուլիս1934, Շարաթ օրուան թիւէն), *Նոր Օր*, Ֆրեզնո, 1934, թիւ 12, № 204, էջ 1:
- <sup>49</sup> M. A. Jendian, *Intermarriage and Assimilation*, New York, 2008, էջ 75:
- <sup>50</sup> LaPiere, էջ 323:

ARMENIAN PRESS IN CALIFORNIA FROM THE 1900S TO THE 1930S  
(SUMMARY)

HASMIK YESSAYAN  
hasmiktk@yahoo.com

This is a study of the beginnings and the early-stage activities of the Armenian Press in California during the first three decades of the 20<sup>th</sup> century. The author highlights some differences between the early Armenian Press of the East Coast and that of the West Coast. She divides the early California Armenian Press into three groups: a) politically affiliated, b) religious and c) independent (national, social, literary, satirical, etc.).

The author notes that the California Armenian press underwent a significant change in the post-WWI period, as the number of newspapers more than doubled from 5 newspapers in Fresno before 1915, to more than twenty during the 1915 to 1930 period. The author explains this sharp increase by the fact that after the Genocide things looked different and the Armenian migrant workers in the US started constructing a community life, as the hope of returning to the parental home decreased. Besides, migrants started to get involved in American life and integrate into American society and milieu to avoid exclusion.

Integration, however, led to a preference for English papers at the expense of Armenian newspapers in the early 1930s. In certain cases Armenian newspapers started including articles and full pages in English.

Nonetheless, throughout the first three decades of its existence, the Armenian press played a basic role in shaping the social, political and national thought of the migrant Armenians. Besides, it promoted an Armenian environment and, in the long run, it became a source for the study of the history of the Armenians of California.